ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀՈԳԻՆ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՈՒՄ
SPECIAL TOPIC: SPIRIT IN THE BIBLE

I. Հին Կտակարան (*ruah*, BDB 924, KB 1197, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՇՈՒՆՉ, ՔԱՆԻ, ՀՈԳԻ /ՀԿ/)
(*ruah*, BDB 924)
Ա. Մոնոթեիստական Աստծո գործողությունները (այսինքն՝ Հոգին, որը կիրառված է ՀԿ-ում 90 անգամ)՝
1. դրական, Ծննդոց 1:2
2. բացասական, 1 Թագ. 16:14-16,23, 3 Թագ. 22:21-22, Եսայի 29:10
Բ. Աստվածատուր կյանքի ուժը մարդկության մեջ (այսինքն՝ Աստծո շունչը, տես՝ Ծնն. 2:7)
գ. Սեպտուագինտան թարգմանում է *ruah* բառը *pneuma* (LXX-ում գործածվում է 100 անգամ)
Դ. Ավելի ուշ ռաբբիական գրերում, ապոկալիպտիկ գրերում և Մեռյալ Ծովի Գալարներում, ազդեցություն կրելով Զրադաշտականությունից, *pneuma* կիրառվում է հրեշտակների և դևերի համար:

II. Հունարեն տերմինները
Ա. *pneō*, փչել
Բ. *pnoē*, քամի, շունչ
Գ. *pneuma*, հոգի, քամի
Դ. *pneumatikos*, հոգու հետ առնչվող
Ե. *pneumatikōs*, հոգևորապես

III. Հունական փիլիսոփայական հիմքը (*pneuma*)
Ա. Արիստոտելն օգտագործում էր այս տերմինը որպես կյանքի ուժ, որը զարգացնում է ծնունդից մինչև ինքնկրթություն:
Բ. Ստոիկները գործածում էին այս տերմինը որպես *psuchē* (շունչ) և անգամ *nous* (միտք) բառերի հոմանիշ՝ ֆիզիկական հինգ զգայարանների և մարդու ինտելեկտի իմաստով:
Գ. Հունարեն մտածելակերպում այս տերմինը դարձավ աստվածային գործողությանը համազոր (այսինքն՝ հմայություն, մագիա, օկուլտիզմ, մարգարեություն, և այլն):

IV. Նոր Կտակարան (*pneuma*, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀՈԳԻՆ [*pneuma*] ՆԿ-ՈՒՄ)
Ա. Աստծո հատուկ ներկայությունը, զորությունը և սպառազինումը
Բ. Հոգին կապված է եկեղեցում Աստծո գործունեության հետ (հիմնականում Հովհաննեսի գրքում)
1. մարգարեություն
2. հրաշքներ
3. ավետարանը քարոզելու համարձակություն
4. իմաստություն (այսինքն՝ ավետարանը)
5. ուրախություն
6. բերում է նոր դարաշրջանը
7. դարձ (այսինքն՝ հետամուտ լինելը և ներբնակեցումը)
8. Քրիստոսանմանություն
9. ծառայության հատուկ պարգևները
10. աղոթում է հավատացյալների համար

Հոգին արթնացնում է մարդկության ցանկությունը Աստծո հետ փոխհարաբերվելու, որի համար էլ ստեղծված են: Այս փոխհարաբերությունը հնարավոր է Հիսուսի՝ Աստծո Մեսիայի (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԵՍԻԱ) անձի և գործի շնորհիվ: Նոր հոգևոր արթնությունը տանում է դեպի Քրիստոսի նման ապրելակերպին, ծառայությանը, և վստահությանը:

Գ. Այն լավագույնս կարելի է հասկանալ որպես մի կողմից Սուրբ Հոգու հետ հոգևոր շարունակականություն, իսկ մարդկությունը որպես այս մոլորակի ֆիզիկական արարած, սակայն նաև մյուս կողմից Աստծո պատկերով հոգևոր արարած:

Դ. Պողոսը ՆԿ-ի հեղինակ է, ով զարգացնում է Հոգու/հոգու աստվածաբանությունը:

1. Պողոսը կիրառում է Հոգին հակադրելու մարմինը (այսինքն՝ մեղքի բնույթը)
2. Պողոսը կիրառում է հոգին հակադրելու ֆիզիկականը
3. Պողոսը կիրառում է Հոգին/հոգին հակադրելու միտքը, ճանաչողությունը, և էությունը

Ե. Մի քանի օրինակներ 1 Կորնթացիների թղթից՝

1. Սուրբ Հոգին , 1 Կորնթ. 12:3
2. Սուրբ Հոգու միջոցով Աստծո զորությունն ու իմաստությունը փոխանցվելիս, 1 Կորնթ. 2:4-5
3. Աստծո գործողությունները հավատացյալի մեջ՝
   - ա. նոր մտածելակերպ, 1 Կորնթ. 2:12, 14:14,32
   - բ. նոր տաճար, 1 Կորնթ. 3:16, 6:19,20
   - գ. նոր կյանք (այսինքն՝ բարոյականություն), 1 Կորնթ. 6:9-11
   - դ. մկրտությամբ խորհրդանշվող նոր կյանքը, 1 Կորնթ. 12:13
   - ե. Աստծո հետ մեկ դարձած (այսինքն՝ դարձը), 1 Կորնթ. 6:17
   - զ. Աստծո իմաստությունը, ոչ թե աշխարհի իմաստությունը, 1 Կորնթ.2:12-15, 14:14, 32,37
   - է. ծառայության համար յուրաքանչյուր հավատացյալի հոգևոր պարգևներ ունենալը, 1 Կորնթացիների 12 և 14
4. հոգևորը ֆիզիկականի հետ հակադրության մեջ, 1 Կորնթ. 9:11, 10:3, 15:44
5. հոգևոր իշխանությունը հակադրության մեջ ֆիզիկական իշխանության, 1 Կորնթ. 2:11, 5:5, 7:34, 15:45, 16:18
6. մարդու ֆիզիկական մարմնից զատ նրա հոգևոր՝ ներքին կյանքը նկատի ունենալու կերպ, 1 Կորնթ. 7:34

Զ. Մարդիկ արարչագործությամբ ապրում են երկու տիրույթներում (այսինքն՝ հոգևոր և ֆիզի—կական): Մարդկությունը Աստծո հետ մտերմությունից ընկավ (Ծննդոց 3): Քրիստոսի կյանքի, ուսմունքների, մահվան, հարության և խոստացված վերադարձի միջոցով, Հոգին հետապնդում է ընկած մարդկությանը գործադրելու ավետարանի հավատքը (այսինքն՝ Հովհ. 6:44, 65), մինչև որ կվերականգնվեն Աստծո հետ փոխհարաբերության մեջ: Հոգին Երրորդության այն անձնական մասն է, որը բնութագրում է արդարության Նոր Դարաշրջանը: Հոգին Հայր Աստծո գործակալն է և Որդու Դատապաշտպանը այս «դարում» (<u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԻՍՈՒՍԸ ԵՎ ՀՈԳԻՆ</u>): Խնդիրը գոյություն ունի, քանի որ նոր դարաշրջանը ժամանակին է տեղի ունեցել, մինչդեռ հին մեղավոր ապստամբությունը դեռևս գոյություն ունի: Հոգին փոխակերպում է հինը նորի, նույնիսկ եթե նրանք երկուսն էլ գոյություն ունեն: